

ՓՐԿԱՐԱՐ ԶՕՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Չի ծնաւ ձեզ այսօր Փրկիչը»
(Ղուկ. Բ.)

Տարեվերջի օրերը մօտ են եւ համայն մարդկութիւնը անգամ մը եւս կը պատրաստուի նստիլ օրերու եւ տարիներու հաշուեհարդարին դիմաց:

Օրերը ծանր են: Օրերը լի են տագնապներով, խռովքներով, ապագայի ամպոտ հեռանկարներով եւ կեանքի ու մահուան տուայտանքներով:

Մարդկութիւնը ամէն օր քիչ մը աւելի տագնապահար աչքերով կը նայի՝ արգելակները կոտրուած ինքնաշարժի մը նման, թաւազլոր կերպով դէպի անդունդ սահող համաշխարհային տնտեսական համակարգին, մտահոգութեամբ կը նայի տարուէ տարի աւելի ահաւոր ուժգնութեամբ մեզ հարուածող մթնոլորտային երեւոյթներուն՝ ցունամիներուն, երկրաշարժներուն, հողմապտոյտներուն, փոթորիկներուն, հրդեհներուն, ողողումներուն: Պաղ պատերազմը, սարսափի միջավայրը, հիւլիական ռումբի մը պայթումին հաւանականութիւնները հետզհետէ աւելի բացայայտօրէն կը ցցեն իրենց գլուխները: Պատերազմը ամէն օր հազարաւոր մարդոց կեանքը կը խլէ աշխարհի զանազան կետերուն վրայ: Տագնապի մէջ է արեւելքը, միջին արեւելքը, Լիբանանը, Հայաստանն ու Արցախը:

Վտանգաւոր ժամանակներու մէջ կ'ապրինք եւ շատ հաւանաբար աւելի վտանգաւոր աշխարհի մըն է որ պիտի կտակենք մեր զաւակներուն...:

Այս տխուր իրականութիւններուն գիտակցումն է գուցէ պատճառը, որ այս տարուան Ս. Ծննդեան գալուստը աւետող զանգակներն ու երգերը մեղամաղձոտ կը հնչեն:

Բայց տարբե՞ր էր աշխարհը երբ Աստուած՝ մարդկութեան տառապանքն ու ինքզինք փրկելու անելային վիճակը տեսնելով, որոշեց մարդկային պատմութեան մէջ յայտնուիլ անձամբ՝ աննախընթաց ու գերբնական յայտնութեամբ մը «Եւ Բանն մարմին եղել եւ բնակեաց ի մեզ» (Յովհ. Ա.): Իր այդ մարդեղացումովը Աստուած աշխարհին կը բերեր փրկութեան Իր տեսլականը եւ ուղին. «Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ»: (Յովհ. Գ. 16):

Այն օրերուն եւս՝ 21 դարեր առաջ, մարդկութիւնը կլանուած էր փառամոլութեան, անկուշտ ազահութեան, բարոյական անկումի, սարսափի

Եւ հարստահարութեան խռովայոյզ պատերազմներու անմարդկային բռնատիրութեանց փոթորկալից ծովուն մէջ եւ ահա Աստուած կու գար մարդանալու, ինքզինք ընծայելու, պատգամելու համար սիրոյ փրկարար զօրութիւնը: Յովհաննէս Առաքեալ հետեւեալ ձեւով կը բանաձեւէ այդ սերը. «Աստուած սեր է: Աստուծոյ սերը հետեւեալ ձեւով մեզի յայտնուեցաւ՝ Աստուած իր միածին Որդին ղրկեց (իբրեւ Չոհ) այս աշխարհը, որպէսզի անով կեանք ունենանք... ուրեմն մենք եւս պետք է իրարու հանդէպ սեր ունենանք (Ա. Յովհ. Դ. 8-11):

Աստուծոյ Սերը վերացական, վիպապաշտական սեր մը չէ այն պարտաւորեցուցիչ է, ան ապրելու եւ գործելու իւրայատուկ ձեւ մը կը թելադրէ, ան մարդեղացած Աստուծոյ կեանքին մէջ գործելու առաքելութեան զսպանակող ուժն է, որ կ'ըսէ.

«Տիրոջ Հոգին վրաս է.
որովհետեւ զիս օծեց եւ ղրկեց՝
աղքատներուն փրկութեան ակտիս տալու,
խրտաբեփները մխիթարելու,
գերիներուն ազատութիւն բերելու,
կոյրերուն աչքերը բանալու
հարստահարուածները ազատելու եւ
յայտարարելու՝ թէ ահա հասած է ժամանակը
երբ Տերը պիտի փրկէ իր ժողովուրդը»:

(Ղուկ. Դ. 18-19):

Սերը ծառայութիւն է: Աստուած՝ սիրով կատարուած ծառայութեան օրինակը բերաւ, որպէս մեր անհատական ու հաւաքական փրկութեան նախապայման ու միջոց: Ան չպատգամեց այլ այդ սկզբունքով գործեց եւ այդ սկզբունքին գործադրութեանը համար իր կեանքը ընծայաբերեց ու մեզի՝ իր աշակերտներուն եւ հետեւորդներուն ըսաւ. «Ինչպէս որ Հայրը զիս ղրկեց, այնպէս ալ ես ձեզ կը ղրկեմ: Հետեւաբար գացէք եւ բոլոր ժողովուրդները աշակերտ դարձուցէք: ... Անոնց սորվեցուցէք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի տուի...»: (Մաթ. Իը. 18-20):

Սակայն մենք մտահան ըրինք տրուած պատուերը ու կրկնեցինք դարաւոր մեր սխալները եւ վերայայտնուեցանք անդունդի եզրին:

Բայց Աստուած իր անհատնում սիրով Աստուածայայտնութեան այս տօնին եւ ամէն տարի ու ամէն կիրակի կու գայ վերյիշեցնելու իր մեծ պատգամը, ծառայութեան փրկարար զօրութեան պատգամը, որ միակ ճանապարհն է դէպի՝ «Խաղաղութիւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ սեր»:

Այսօր մեր շրջապատին մէջ որքան աղքատներ չքաւորութեան շղթաներուն մէջ փրկութեան կը սպասեն, որքան մենաւոր սգաւորներ մեր մխիթարիչ սպեղանիին կը սպասեն, իրենց մոլութիւններուն գերին դարձաց քանի մարդիկ կը սպասեն որ իրենց շղթաները փշրենք, բայց այս բոլորը ընելու

համար պետք է որ մեր աչքերը բացուին եւ հաւատանք ու հետեւինք մեր փրկչին, որպէս զի յաւիտենական կեանքն ու երջանկութիւնը ունենանք:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ

Յանուն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդարանի Ազգային Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներուն եւ անձնապէս, բոլորիդ կը մաղթենք արեւշատ քաջառողջ օրեր, բարեաց գործոց յաջողութիւն եւ երջանկակից, խաղաղ, մարդահաճոյ եւ Աստուածահաճոյ բարօր կեանք:

Ձեզի մեզի մեծ Աւետիս:

Աղօթարար՝

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ
Առաջնորդ
Գանատայի Հայոց Թեմի